Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 14-ի N 166 - Ն որոշման

2013 Թ Վ Ա Կ Ա Ն Ի Ծ Ր Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

I. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Սույն ծրագիրը մշակվել է ապահովելու երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը՝ կազմակերպությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման, ինչպես նաև Գյումրիում ինովացիոն համակարգի ձևավորման միջոցով: Միջոցառումներն ուղղված են տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը, արտահանման ներուժի բացահայտմանը, արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը, գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը, համապատասխան ենթակառույցների ձևավորմանը, կրթության որակի և մատչելիության բարձրացմանը, Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծմանն ուղված միջոցառումների իրականացմանը:

2. Եվնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում,

որը միտված է տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով:

3. Տարածքային զարգացման, փոքր և միջին բիզնեսի խթանման ու աշխատատեղերի ստեղծման նպատակով 2008 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանության արժանացրեց Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու ծրագիրը, որով սկսվեց Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագիրը՝ ըստ համապատասխան տարիների, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ ստեղծելու մասին» N 1163-Ն որոշմամբ ստեղծվեց Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը համապատասխան ծրագրեր իրականացնելու նպատակով:

4. 2012 թվականին Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման 2012 թվականի ծրագրի շրջանակում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1) Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր» N 7963-AM վարկային համաձայնագրի շրջանակում արդեն սույն թվականի մայիսից մեկնարկել են Տեխնոպարկի հիմնական շենքի հիմնանորոգման աշխատանքները: Հիմնանորոգման արդյունքում մոտ ապագայում կստեղծվի շուրջ 6500 քառ. մետր մակերեսով անշարժ գույքի ամբողջական համալիր, որը կներառի տեխնոլոգիական ընկերությունների համար ժամանակակից, բարձրորակ ենթակառուցվածքներով հագեցած գրասենյակային և ընդհանուր օգտագործման տարածք-ներ, ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներ ու լսարաններ, հանդիպման սենյակներ, վարձակալների՝ Տեխնոպարկի շրջանակներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար հանրային սննդի կետ և փոքր հյուրանոցային մաս: Շենքում կտեղակայվի նաև Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, որը կներառի

բիզնես ինկուբատոր և կրթական հատված: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013 թվականի վերջին.

2) 2011 թվականի ապրիլ ամսից ստեղծվել և ներկայումս Գյումրիում գործում է «Դ-ԼԻՆԿ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» (D-Link International Pte Ltd) հայաստանյան ներկայացուցչության տարածաշրջանային հետազոտական խումբը՝ ընդլայնվելու հեռանկարով: «Դ-ԼԻՆԿ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» (D-Link International Pte Ltd) հայաստանյան ներկայացուցչությունը հանդիսանում է ցանցային և հեռահաղորդակցության սարքավորումների մշակման և արտադրության մեջ մասնագիտացած համաշխարհային առաջատարներից: Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 536-Ա որոշմամբ հաստատվել է ընկերության ներդրումային ծրագիրը, և հատկացվել է տարածք հետազոտական կենտրոնի շինարարության համար: Կենտրոնի գործարկումը նախատեսվում է 2013-2014 թվականների ընթացքում.

3) կրթական ծրագրեր միջոցառման շրջանակում եռաչափ մոդելավորման, մուլտիմեդիայի, մեխանիկայի և էլեկտրոնիկայի ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներում 2012 թվականին վերապատրաստվել են շուրջ 214 ուսանողներ և մասնագետներ:

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել՝

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագիրը.

2) «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 730-Ա որոշումը,

որով սահմանվում են 2012-2017 թվականների համար Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հիմնական գերակայությունները, մասնավորապես, «Տնտեսության մրցունակության բարձրացում՝ որպես երկարաժամկետ կայուն աճի գլխավոր պայման» գերակայությունը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված՝ Կայուն զարգացման ծրագիրը:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի նիստի N 1 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը.

6) Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը, որի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրագործում է հատուկ պետական աջակցության ծրագիր՝ կարևորելով ձեռնարկատիրության դերը տնտեսության զարգացման և հատկապես՝ զբաղվածության ապահովման բնագավառում.

7) արդյունաբերական քաղաքականության իրականացումն ապահովելու և Հայաստանի Հանրապետության պետական այլ կառույցների գործունեությունը համակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի փետրվարի 29-ի N 178-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության վարչապետին կից Արդյունաբերական խորհուրդ, որը, հանդիսանալով ռազմավարության իրականացման աշխատանքների համակարգող բարձրագույն մարմին՝ կապահովի ռազմավարության արդյունավետ իրականացումը.

8) համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1405-Ն որոշման՝ ընդլայնվել են հիմնադրամի խնդիրներն ու գործառույթները՝ հանդիսանալով Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրի կատարման գլխավոր օպերատոր.

9) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով ստեղծվել են դեղագործության և բիոտեխնոլոգիաների, գինեգործության և կոնյակագործության, ճշգրիտ ճարտարագիտության, թեթև արդյունաբերության և ոսկեգործության, աղամանդագործության և ժամագործության ոլորտային խորհուրդները, ինչպես նաև ռազմավարության ոլորտային խորհուրդների աշխատանքների կազմակերպման նպատակով «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունում ստեղծվել են կոնյակագործության և գինեգործության, դեղագործության ու բիոտեխնոլոգիաների և ճշգրիտ ճարտարագիտության ոլորտային խորհուրդների քարտուղարությունները՝ կազմված Զարգացման հայկական գործակալության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և համապատասխան ոլորտի ներկայացուցիչներից.

10) 2012 թվականի հունիսի 8-ին Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտային խորհրդի կողմից հաստատված և 2012 թվականի հուլիսի 24-ին կայացած Հայաստանի Հանրապետության վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հավանության արժա- Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015 թվականների գործողությունների ծրագիրը.

11) 2012 թվականի հունիսի 14-ին Կոնյակագործության ոլորտային խորհրդի կողմից հաստատված և 2012 թվականի հուլիսի 24-ին կայացած Հայաստանի Հանրապետության վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հավանության արժանացած կոնյակագործության ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015 թվականների գործողությունների ծրագիրը.

12) 2012 թվականի հոկտեմբերի 17-ին կոնյակագործության ոլորտային խորհրդի կողմից հաստատված և 2012 թվականի նոյեմբերի 27-ին կայացած Հայաստանի Հանրապետության վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հավանության արժանացած Գինեգործության 2012-2015 թվականների ոլորտային ռազմավարությունը, ինչպես նաև ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015 թվականների գործողությունների ծրագիրը.

13) 2012 թվականի հոկտեմբերի 9-ին ոլորտային խորհրդի կողմից հաստատված և 2012 թվականի նոյեմբերի 27-ին կայացած Հայաստանի Հանրապետության վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հավանության արժանացած Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015 թվականների գործողությունների ծրագիրը.

14) 2012 թվականի ապրիլի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և կոնյակագործության ոլորտի ներկայացուցիչների միջև կոնյակագործության ոլորտային ռազմավարության իրականացման վերաբերյալ» հուշագիրը.

15) 2012 թվականի ապրիլի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչների միջև դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտային ռազմավարության իրականացման վերաբերյալ» հուշագիրը.

16) 2012 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և ճշգրիտ ճարտարագիտության/ ճարտարագիտության ոլորտի ներկայացուցիչների միջև ճշգրիտ ճարտարագիտության/ ճարտարագիտության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ» հուշագիրը.

17) 2012 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և գինեգործության ոլորտի ներկայացուցիչների միջև գինեգործության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ» հուշագիրը.

18) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի նիստի N 23 արձանագրության 5-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1463-Ն որոշումը.

20) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 450-Ն որոշումը.

21) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Ներդրումային ծրագրին հավանություն տալու, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու և համագործակցության հուշագիր ստորագրելու մասին» N 536-Ա որոշումը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

6. Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը, վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացումը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացումը, ինչպես նաև արդյունաբերության ոլորտի մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացումը: Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը կնպաստի 2013 թվականին ՀՆԱ-ում արդյունաբերության արտադրանքի ծավալների առաջանցիկ աճին՝ տարեկան 8-9%՝ ապահովելով արդյունաբերական արտադրանքի մինչև 5% արտահանման աճ և առաջիկա տարիներին ՀՆԱ-ում մասնաբաժնի ավելացման մինչև 20%:

7. Ծրագրի իրականացումը նախատեսում է հետևյալ արդյունքները՝

1) տնտեսության արտահանելի հատվածի մեծացում և դիվերսիֆիկացում.

2) հայկական ապրանքների մրցունակության բարձրացում.

3) հասցեական աջակցության տրամադրում մշակող արդյունաբերության ոլորտի ռազմավարությամբ նախանշված ոլորտների արտահանման ուղղվածություն ունեցող ընկերություններին.

4) գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում գիտական մշակումների առևտրայնացմանն աջակցություն.

5) պետական և մասնավոր հատվածների փոխշահավետ համագործակցություն:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

8. Ծրագիրն իրականացվում է պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությանը հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ սահմանված ոլորտային ռազմավարությունների միջոցառումների ծրագրերը: Պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունն իրագործվելու է ռազմավարության շրջանակում նախանշված գործիքակազմի միջոցով և սկզբունքներով: Ոլորտային ռազմավարությունները հիմք են հանդիսանալու մասնավոր հատվածին ուղղված պետական և դոնոր կազմակերպությունների նախաձեռնությունների համակարգման և ջանքերի ուղղորդման ու փոխլրացման համար: Պետություն-մասնավոր համագործակցության ամրապնդման նպատակով ռազմավարությամբ նշված ոլորտային ռազմավարությունների իրականացման նպատակով համապատասխան հուշագրեր են կնքվում Հայաստանի Հանրապետության կառավարության և շահագրգիռ կողմերի միջև:

V. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

9. Ծրագրի իրականացման համար նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ՝

ա. «Հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպություն-ների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ

տնտեսական գոտում» ենթածրագրի շրջանակում նախատեսվում է արտերկրում նպատակաուղղված առաքելությունների, ներդրումային ֆորումների և այլ միջոցառումների միջոցով ընտրված անդրազգային ընկերություններին ազատ տնտեսական գոտու հնարավորությունների շնորհանդեսների կազմակերպում, այդ թվում՝ նաև ներգրավելով պոտենցիալ սփյուռքահայ ներդրողներին: Աշխատանքների իրականացման արդյունավետությունն ապահովելու համար նախատեսվում է պոտենցիալ ներդրողների և բարձր կառավարչական պաշտոն ունեցող սփյուռքահայերի տվյալների բազային պատրաստում, ինչը հնարավորություն կընդձեռի հաջորդ տարիների ընթացքում կազմակերպել Հայաստանում արդյունաբերության որոլտի ներկայացուցիչների համահայկական համաժողով: Այս միջոցառումը նաև ներառում է շնորհանդեսների կազմակերպման միջոցառումների նախապատրաստական աշխատանքների իրականացում, ճանապարհածախս, տարածքի վարձակալություն, կոմունիկացիոն ծախսեր, տեղեկատվական նյութերի պատրաստում և այլն: Ենթածրագրի շրջանակում ակնկալվում է նաև անդրազգային կորպորացիաների ներկայացուցիչների այցելություն (ժամանում) Հայաստան, որոնց կներկայացվեն ազատ տնտեսական գոտու հնարավորությունները, որի արդյունքում ակնկալվում է իրական համագործակցության արդյունքներ անդրազգային ընկերությունների հետ,

բ. «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» ենթածրագիրը նախատեսում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ ընտրված արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում, որը կիրականացվի «ՓՄՁ ներդրումներ» ոնիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից:

Սուբսիդավորվելու է վարկի տոկոսադրույքի՝ մինչև երեք տոկոսային կետին համարժեք գումարը,

գ. «Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջ մղման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում» ենթածրագրի շրջանակում նախատեսվում է մինչև 3 երկրներ նպատակային շուկաներում ռազմավարությամբ ընտրված և Արդյունաբերական խորհրդի կողմից հավանության արժանացած ոլորտների ընկերությունների ներկայացուցիչների հետ որոշման արդյունքում, արտերկրում հայկական արտադրանքի գովազդում, դահլիճի և սարքավորումների վարձակալություն, այդ թվում՝ նաև համտեսների կազմակերպման հետ կապված այլ ծախսեր, տպագիր նյութերի պատրաստում: Նախատեսվում է նաև համտեսների կազմակերպման նպատակով յուրաքանչյուր նպատակային երկրում պետական կառույցներից մինչև 4 ներկայացուցիների մասնակցության ապահովումը,

դ. «Միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում» ենթածրագրի շրջանակում նախատեսվում է օժանդակել տեղական ընկերություններին միջազգային շուկաներ դուրս գալու հարցում, միջազգային սերտիֆիկատների ձեռքբերում, որակի համակարգի ներդրմանը (օրինակ՝ ISO22000-ի, HACCP համակարգի ներդրում, դեղերի գրանցում և այլ) պետական աջակցության ցուցաբերում,

ե. «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» ենթածրագրի շրջանակում նախատեսվում է մինչև 5 թիրախային երկրներում ցուցահանդեսի մասնակցության աջակցություն: Քանի որ ռազմավարության իրականացման սկզբունքը պետություն-մասնավոր համագործակցությունն է, ցուցահանդեսներին մասնակցությունը կորոշվի ոլորտային խորհուրդներում մասնավոր հատվածի հետ քննարկման արդյունքում: Այն ենթադրում է տաղավարի և տարածքի վարձակալության, կահավորման և ցուցահանդեսների մասնակցության հետ կապված այլ ծախսեր: Նախատեսվում է նաև նշված ցուցահան-

դեսների կազմակերպման նպատակով յուրաքանչյուր ցուցահանդեսին պետական կառույցներից 2 ներկայացուցիների մասնակցության ապահովումը,

զ. «Արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկայացուցիչների այցելություններ Հայաստան, գործարար կապերի հաստատում» ենթածրագրի շրջանակում նախատեսվում է Հայաստանի Հանրապետություն մինչև 60 անձի այցելության ապահովում, ինչը հնարավորություն կընձեռի տեղում ծանոթանալու հայկական ընկերությունների ներկայացուցիչների հետ: Սույն միջոցառումը կնպաստի սերտ գործարար կապեր ստեղծելուն և հնարավոր արտահանման գործընկերների ձեռքբերմանը,

է. «Վերապատրաստման դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում» ենթածրագրի շրջանակում նախատեսվում է ռազմավարությամբ ընտրված ոլորտների ընկերությունների կարողությունների զարգացում, մասնավորապես, նորագույն տեխնոլոգիաների և նեղ մասնագիտացված ուղղություններով բարձր որակավորում ունեցող մասնագետների օգնությամբ վերապատրաստման իրականացման ապահովում և անհատական խորհրդատվության տրամադրում՝ ներգրավելով տվյալ բնագավառի մասնագետների՝ պետական, մասնավոր, գիտական շրջանակներից, ինչպես նաև արտասահմանից: Ընդ որում, դասընթացների իրականացման անհրաժեշտությունը որոշվում է համապատասխան ոլորտային խորհրդի շրջանակներում քննարկման արդյունքում՝ ըստ ոլորտի պահանջարկի: Տվյալ միջոցառումը նախատեսված է արտադրության կազմակերպում, մարքեթինգային քաղաքականություն, արտահանման գործունեություն, մտավոր սեփականության իրավունք, որակի համակարգի ներդրում, ֆինանսական հոսքերի կառավարում, անձնակազմի կառավարում ուղղությամբ կարողությունների զարգացման համար վերապատրաստման դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման համար,

ը. «Արտահանմանն ուղղված արտադրատեսակների արտադրության ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտությունների իրականացում» ենթածրագրի շրջանակում նախատեսվում է ներգրավել շուրջ 3 փորձագետների, որոնք կապահովեն առկա ներուժի և կարողությունների պոտենցիալի բացահայտումը, ինչպես նաև զարգացման հեռանկարները՝ ոլորտի համատարած մոնիթորինգ և ռիսկերի գնահատում: Ստեղծված տեղեկատվության բազային հիման վրա հնարավոր կլինի արդիականացնել արդյունաբերության բնագավառի քաղաքականությունն ու բացահայտել թիրախային ոլորտները: Արդյունքում կապահովվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների ու մասնավոր հատվածից ներգրավված ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը.

2) հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝

ա. անշարժ գույքի կառավարում՝ միջոցառման շրջանակում նախատեսվում է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Մ. Նալբանդյանի անվան Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի շենքի՝ ըստ նախագծային փաստաթղթերի շինարարական աշխատանքների վերահսկողության նպատակով վարձել շինարարության գծով պատասխանատու մասնագետներ, որոնք կատարված աշխատանքների վերաբերյալ պարբերական ներկայացնում են հաշվետվություններ, որոնցում նկարագրվելու են կատարվող շինարարական աշխատանքների փուլերը, դրանց համապատասխանությունը սահմանված ժամանակացույցին, որակական չափանիշներին և այլն: Նաև միջոցառման շրջանակում նախատեսվել են հիմնադրամի ժամանակավոր գրասենյակի վարձակալության համար վճարները,

բ. ինովացիոն ոլորտի կրթական ծրագրեր՝ ենթածրագրի շրջանակում նախատեսվում է ուսումնամեթոդական նյութերի կազմում, դասընթացների անցկացում և գործնական պարապմունքների կազմակերպում: Նախատեսվում է 2013 թվականի ընթացքում

կազմակերպել ուսուցում մինչև 70 ունկնդիրների համար, այդ թվում՝ 50 ունկնդիր «Մեխանիկայի և էլեկտրոնիկայի լաբորատորիաներ» և 20 ունկնդիր՝ «Մուլտիմեդիայի լաբորատորիայի» ծրագրերի շրջանակներում.

3) արդյունաբերության զարգացմանն աջակցության ծրագրերի կառավարում և համակարգում՝

ա. միջոցառումը նախատեսում է Արդյունաբերության զարգացման հիմնադրամի կառավարման նպատակով ներգրավել համապատասխան ոլորտների բարձր որակավորում ունեցող մասնագետների: Նախատեսվում է ապահովել հիմնադրամի աշխատանքների հնարավորինս արդյունավետ կազմակերպում և ռեսուրսների օպտիմալ օգտագործում: Նաև նախատեսվում է ներգրավված մասնագետների մասնակցությունը պետական ու միջազգային ներդրողների հետ հանդիպումներում՝ այլ աղբյուրներից ծրագրի ֆինանսական միջոցներ հայթայթելու, ինչպես նաև հիմնադրամի նախագծերը, հիմնադրամի ներքո գործող ընկերությունները ներկայացնելու և դրանց կողմից մշակվող արդյունքներն առևտրայնացնելու համար,

բ. միջոցառման շրջանակում նաև նախատեսվում է պատրաստել և սահմանված կարգով ու ժամկետներում ներկայացնել համապատասխան հաշվետվություններ նշված աշխատանքների կատարման արդյունքների վերաբերյալ,

գ. այս միջոցառումը նախատեսում է Արդյունաբերության զարգացման հիմնադրամի և իր Գյումրու մասնաճյուղի գործունեության համար անհրաժեշտ աշխատանքային թիմի վարձատրության և գրասենյակի պահպանման ծախսեր:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10. Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների

իրականացման 2013 թվականի ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 463700.0 հազ. դրամի չափով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 14-ի N 166 - Ն որոշման

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր Ի Ց Ա Ն Կ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Կատարման արդյունքները
1	2	3	4	5
1.	ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ		2013 թ. ընթացքում	Երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորում՝ կազմակերպությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի անընդհատ արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման միջոցով:
	1.1. հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ) «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ (համաձայնությամբ) «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Արտերկրում նպատակաուղղված առաքելությունների, ներդրումային ֆորումների և այլ միջոցառումների միջոցով ընտրված անդրազգային ընկերություններին ազատ տնտեսական գոտու հնարավորությունների մինչև 3 շնորհանդեսների կազմակերպում՝ ներգրավելով նաև պոտենցիալ սփյուռքահայ ներդրողների, ինչպես նաև մինչև 20 անդրազգային կորպորացիաների

1	2	3	4	5
				ներկայացուցիչների այցելություն/ժամանում Հայաստան, որոնց կներկայցվեն ազատ տնտեսական գոտու հնարավորությունները, որի արդյունքում ակնկալվում է իրական համագործակցության արդյունքներ:
	1.2. արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ) «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ ընտրված արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի շուրջ 10 կազմակերպություններին «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կողմից տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում մինչև երեք տոկոս:
	1.3. շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջ մղման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ) «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Ռազմավարությամբ ընտրված և Արդյունաբերական խորհրդի կողմից հավանության արժանացած ոլորտների ընկերությունների հետ արտերկրում՝ մինչև 3 երկրներ, հայկական արտադրանքի գովազդում, այդ թվում նաև՝ համտեսների կազմակերպում:
	1.4. միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ) «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Տեղական ընկերություններին միջազգային շուկաներ դուրս գալու, միջազգային սերտիֆիկատների ձեռքբերման համաֆինանսավորում, որակի համակարգի ներդրման նպատակով (օրինակ՝ ISO22000-ի, HACCP համակարգի ներդրում, դեղերի գրանցում և այլ) պետական աջակցության ցուցաբերում:

1	2	3	4	5
	1.5. միջազգային ցուցահան-դեսներին մասնակցության ապահովում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ) «Զարգացման հայկական գործա-կալություն» փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Աջակցություն՝ ռազմավարությամբ ընտրված և հավանության արժանացած ոլորտների ընկե-րություններին՝ մինչև 5 երկրներում, ցուցահան-դեսներին մասնակցությանը, ցուցահանդեսների ընտրությունը կիրականացվի համապատասխան ոլորտային խորհուրդներում ոլորտի ընկերություն-ների հետ քննարկման արդյունքում: Այս միջո-ցառումը կխթանի հայկական արտադրատեսակ-ների արտահանումը և դրանց մրցունակության բարձրացումը:
	1.6. արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկա-յացուցիչների այցելություններ Հայաստան, գործարար կապերի հաստատում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ) «Զարգացման հայկական գործա-կալություն» փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Հայկական արտադրանքի առաջմղման և արտա-հանման խթանման նպատակով օտարերկրյա տարբեր ընկերությունների և օժանդակ կառույցների մինչև 60 ներկայացուցիչներ կհրավիրվեն Հայաս-տան հայկական ընկերությունների հետ համա-գործակցության պայմանավորվածություններ ձեռք բերելու նպատակով:
	1.7. վերապատրաստման դասընթացների մշակման, կազմակերպման և իրակա-նացման ֆինանսավորում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Կիրականացվի վերապատրաստում առնվազն 50 շահառուների համար, որոնք կներգրավվեն ռազմավարությամբ ընտրված ոլորտներից:
	1.8. արտահանմանն ուղղված արտադրատեսակների արտադրության ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտությունների իրականացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Մոնիթորինգի և ռիսկերի գնահատման հիման վրա հետագա քաղաքականության արդիականացման համար ռազմավարության ուղիների ներկայացում՝ հաշվետվություն:

1	2	3	4	5
2.	Հիմնադրամի Գյումրու մաս-նաճյուղի զարգացմանն ուղղված միջոցառումներ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Այս միջոցառումների նպատակը Գյումրիում ինովացիոն համակարգի ձևավորումն է:
	2.1. անշարժ գույքի կառավարում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Գյումրու պետական մանկավարժական ինստի-տուտի շենքի՝ ըստ նախագծային փաստաթղթերի շինարարական աշխատանքների վերահսկողու-թյուն, դրանց ընթացքի վերաբերյալ հաշվետվու-թյունների ներկայացում
	2.2. ինովացիոն ոլորտի կրթական ծրագրեր	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Մեխանիկայի և էլեկտրոնիկայի, ինչպես նաև մուլտիմեդիայի լաբորատորիաներում ուսումնա-մեթոդական նյութերի նախապատրաստում, դասընթացների անցկացում, տեսական և գործնական պարապմունքների կազմակերպում, մինչև 70 մասնագետների (ուսանողների) համար
3.	Արդյունաբերության զարգացմանն աջակցության ծրագրերի կառա-վարում և համակարգում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ» (համաձայնությամբ)	2013 թ. ընթացքում	Արդյունաբերության զարգացման հիմնադրամի 2013 թվականի միջոցառումների արդյունավետ կազմակերպում, կանոնադրական գործառույթների իրականացում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

13_0166